

գրեթէ չորս միլիոնի կհասնի:

Բամբակի գործարանաց ամենէն շատը Անգլիա է:

Արագուսիւն Ելեկտրագոյ:

Նափովէն Կայսեր մարտի 1-ին օրէնսդիր ժողովոյն առջեւ խօսած ճառին մէջ կար 1,466 բառ. նոյն օրը երկու ելեկտրական թելերով Փարիզէն Լիոն քաղաքը ամբողջ ճառը փոխանցուեալ է:

Փարիզէն Լիոն այն ճառին ամբողջ փոխանցման գործողութիւնը տեւեր է 55 վայրկեան:

Լիոն քաղաքը Փարիզէն 507 հազարմետր (քիլոմետր) հեռու է:

Նոր-Եօրֆի բողոքականաց այլեւայլ աղանդներ:

Հետագայ յօդուածը կամ ցուցակը Ամերիկայի Նոր-Եօրք քաղաքին եկեղեցական Օրագրէն կթարգմանեմք՝ լոկ իբրեւ հետաքրքրական գիտելիք մը: Վրան ամենեւին կրօնական կամ բարոյական խորհրդածութիւն չեմք աւելցրներ, վասնզի ընթերցողք պէտք եղած հետեւանքը զիւրաւ կրնան մակաբերել. մենք այս միայն ըսեմք որ քրիստոնէական հաւատքին բողոքականաց մէջ այսչափ բազմաթիւ ճիւղեր բաժնուելուն մի միայն պատճառ եւ աղբիւր է իրենց այս թիւր եւ մոլար սկզբունքը թէ «Աստուածաշնչէն դուրս ամենեւին մէկ բանի մը պէտք չէ հաւատալ, եւ Աստուածաշնչին խօսքերը ամէն մարդ ալ իր ուզածին պէս կրնայ հասկընալ»:

Օրագրին յիշած ցուցակը այս է.

«Կրկնակնունք, մկրտականք, նոր մկրտականք, ազատ մկրտականք, անջատ մկրտ-

ականք, խստակրօն մկրտականք, ազատամիտ մկրտականք, խաղաղասէր մկրտականք, տղայոց մկրտականք, փառատօրիչ մկրտականք, ալէլուիա մկրտականք, մկրտական քրիստոնէայք, երկաթաբազուկ մկրտականք, հանրական մկրտականք, մասնական մկրտականք, մկրտականք եօթներեկի, սկովտացի մկրտականք, մկրտականք, նորոյ ընդհանրական կրօնի, թխամորթ մկրտականք, ինքնագլուխք կամ մաքրականք, քամերոնեանք, կծկոտք, տալէեանք, քամպէեանք կամ նորակրօնք, տունքերեանք, ազատասիրք, հալտէեանք, հունթինկթոնեանք, իրվինկեանք, ինկանեանք, վազլանք, զիչք, զրոց սրբոց քրիստոնէայք, կլասեանք, կամ սանտոմոնեանք, հին երիցականք, նոր երիցականք, սկովտացիք, միաբանականք, քուէյքքրք կամ բարեկամք, զողոջոտք, միահաւատք, սոկինեանք, մորաւացիք կամ եղբարք միութեան, մեթոտեանք, վէալէեանք, վաղնչուց մեթոտեանք, նորակրօն վէսլէեանք, կալվինական մեթոտեանք գաղղիացիք, նախնի յարակցականք, նոր յարակցականք, սուետեպորկեանք, փլիմութեան եղբարք, կրրկնակնուք քրիստոնէայք, մորմոնք, քէլիեանք, մուկլթոնեանք, ռոմանեանք կատարելասէրք, ռոկէսեանք, սեքլեանք, հանրականք, քայլականք, վայթֆիլտեանք, ազատասէր աշակերտք կամ ակափեմոնեանք, լուտերականք, գաղղիացի բողոքականք, նորակրօն գերմանացիք, բողոքական գերմանացիք նորակրօնք, գերմանացի կաթոլիկք կամ աշակերտք Ռոնկի, նոր լուսաւորեալք, անգղիական անգղիացիք, անգղիական գերմանացիք, անգղիական գաղղիացիք»:

Այս ցուցակը հրատարակող եկեղեցական Օրագիրը վրայ կբերէ թէ անշուշտ մէկ քանին ալ մոռցուած պիտի լինի:

ՏԵՍՈՒԹԻՒՆ ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱՆՅԻՑ.

Աստորիոյ գործերը անցած տարւոյն վերջերը բոլոր եւրոպայի ուշադրութիւնը իրենց վրայ դարձուցեր էին. այս տարի ալ նոյնպէս ամենայն լրագրաց խօսակցութիւններուն նիւթ եղած են, եւ ամենուն կարծիքն այն էր թէ այս տեւրութիւնը հարկ է որ քիչ ժամանակի մէջ զանազան փոփոխութիւններ ընէ կամաւ կամ առ հարկի իւր կառավարու-

բեանը մէջ, որպէս զի հպատակները այնչափ չզանգատին, զանձը այնչափ նեղութիւն չկրէ եւ տուրքերը օրէ օր աւելի չծանրանան: Այս եւս ճշմարիտ է որ Աստորիոյ տեւրութեան համար այսպիսի նեղութիւնները նոր բաներ չեն. 1838-ին պատահմունքները աւելի ալ վտանգաւոր կերեւնային իրեն համար, եւ սակայն իւր խորագիտ քաղաքականութեամբը

ամեն վտանգ նուազուց: Այսու ամենայնիւ Խալկոյ վերջին պատերազմներուն մէջ Աստորիոյ զինուորական ոյժը տկար երևցաւ. եւ պատճառը անշուշտ այս էր մէկ կողմանէ որ պատերազմը իրեն ըշնամի ազգի մը երկրին մէջ էր, եւ միւս կողմանէ այն՝ որ ոչ թէ մէկ տերութեան մը նետ էր կռիւր, այլ երկու եւ երեք զօրաւոր բանակներու:

Բայց ամենքն ալ կը վկայեն թէ Աստորիոյ այժմու տկարութեանը բուն գլխաւոր պատճառ՝ իւր մէջ եղած զանազան ազգաց տոգոնութիւնն է: Բոլոր Աստորիոյ բնակչաց թիւն է 37 միլիոն 339 հազար հոգի, ասոնցմէ միայն 7 միլիոն 980 հազարը գերմանացի են, 15,170,000-ը սլաւոն, 5,418,000-ը մաճառ, 5,466,000-ը իտալացի (Լոմպարդիայի բաժնուէն առաջ), մնացածներն են ուլան, հայ, առնաւուտ, եւ այլն: Զօրացը թիւը 492,486 է. եւ սոցա մէջ միայն 128,486 հոգին գերմանացի են ազգաւ. իսկ միւս մասին ալ շատը մաճառ եւ սլաւոն լինելով՝ զարմանք կուգայ մարդուս թէ այն տերութիւնը ինչպէս կարող է վտանգիլ օտարազգի զինուորաց վրայ, եւ զանոնք առնուլ զործիք՝ իւր հպատակ ազգերը ընկճեալ պահելու համար:

Խաղաղական պատերազմին ազդեցութիւնը ոչ միայն Աստորիոյ վրայ երևցաւ, այլ եւ բոլոր Գերմանիոյ ներքին գործերուն մէջ շատ փոփոխութիւն պատճառեց: Նախորդէն կայսեր արշաւանքէն Գերմանական Գաշնակցութեան աչքը վախցաւ, եւ իսկոյն սկսան զօրածողով ընել ամեն տեղ ու պատերազմի պատրաստուիլ, բեպտ եւ ծանր կերպով: Այն կուսակցութիւնն որ 1848-ին յեղափոխութիւններն վերջը ձեռնացաւ Գերմանիոյ մէջ, անցնել տարուան ետքերը նորէն սկսաւ խլրտիլ եւ ետեւէ լինել որ Գերմանական միութեան զաղափարը ի գործ դրուի. եւ թեպէտ այս անգամ եւս այն շարժումները անպատուղ պիտի մնայ, ինչպէս կերեւի, բայց ո՞ր ցիտէ՝ զուգէ ժամանակաւ մէկ կերպով մը կատարուի, եւ Գերմանիան յիստի բովանդակ աշխարհիս հօգը կայսերութիւններէն մէկը ձեռնադրէ:

— Պապին ժամանակաւոր իշխանութեանը վրայ՝ Խաղաղական խնդրոյն պատճառաւ ուրիշ ամեն ժամանակէ առելի այս միջոցիս վէճեր բացուեցան Եւրոպայի մէջ: Երկու կողմէն ալ հրատարակուած գրքերուն, տետրակներուն, օրագրաց հատուածներուն քաղմութիւնը խիստ մեծ է: Յայտնի է որ ճշմարտութիւնը նոցա կողմն է այս խնդրոյս մէջ՝ որք ուղիղ կ'հասկնան սուրը Աւետարանին այն խօսքը զոր բաժն է Քրիստոս Տէրն մեր՝ թէ «Իմ արքայութիւն չէ յայտ աշխարհէ»: Այսինքն Քրիստոս աշխարհը չէր եկած որ մարմնաւոր եւ արտաքին բազաւորութիւն բանեցընէ, ուստի եւ իրեն փոխանորդ եկեղեցականները մարմնաւոր իշխանութեան հետեւ չեն կրնար իյնալ՝ առանց իրենց վիճակն ու պարտքերը մոռնալու: Բայց մենք ալ մեր ընթերցողաց միտքը այս նիւթիս վրայ առելի արթնցնելու դիտաւորութեամբ՝ յաջորդ ամսաբերքներուն մէջ առելի տեղով պիտի խօսինք: Աս այժմ հարկ կ'անմարմն քաղելով դնել այս տեղ Տէրիս անունով քաջ եւ մեծանուն իրաւագիտին ճառը՝ զոր խօսքը է այս բանիս վրայ Գաղղիոյ ձերակուտին մէջ մարտի 10-ին:

Պ. Տիւփեն իւր ճառին սկիզբը զո՞ն սրտով կ'ըլլուցէ որ այս խնդիրը հաւատոյ խնդիր չէ, ուստի ամեն մարդ կարող է համարձակ խօսիլ վրաս՝ առանց վախճալու որ պապին ու պապականներուն առջեւը հերետիկոս կամ հերձուածող պիտի երևնայ: Յետոյ կնկարագրէ Գաղղիոյ եւ ուրիշ տեղերու նախանձայող կարգիկներուն շփոթութիւնը, բողոքները, անտեղի աղաղակները եւ անվայել խօսքերը հակառակ Գաղղիոյ կայսեր, որով շատ եկեղեցականներ, եւ մանաւանդ ճիգիւրները՝ կաշխատին ժողովուրդը օտք հանելու տերութեան դէմ, հակառակ ամենայն իրաւանց, եւ մասնաւորապէս զաղղիական օրինաց: Եւ ապա կրէ. «Ո՛վ կայ մեր մէջ որ Խալկոյ խեղճութիւնները չգիտնայ, եւ ինքն ալ բոլոր սրտով չխոսնայ վրաս: Խալկացիք 1848-ին յանկարծակի օտք ելան. ախճո՞ւ որ Հռոմէ քաղաքին մէջ ճշմարիտ ազատութեան տեղ՝ շուտ մը անխիստութիւններ տիրեց, ուստի եւ Գաղղիոյ հասարակագիտութիւնը ոչ

միայն չմիաբանեցաւ Հռոմայեցեաց նետ, այլ եւ իւր զենքերովն ու արեամբը պապին պաշտպանելու ելաւ, եւ ահա տարաւ տարի է որ մեր զօրքովը՝ մեր ծախքովը կը պաշտպանենք զինքը: Լուրովիկոս Նախորդէն կայսր լինելէն ալ առաջ խելացի խորհուրդներ տուաւ պապին որ տերութեանը մէջ քանի մը բարեկարգութիւններ ընէ, բայց նա առելի մտիկ ըրաւ ուրիշներու խորհրդին քան թէ իւր սրտին: Պապին այս կերպով խօսք չ'հասկերնալէն միտքս ընկաւ այն դիպուածն որ հռչակաւոր ժողովներէն մէկուն մէջ պատահեց թէ ատենով: Գաղղիացի եպիսկոպոսներն մէկը խորհուրդ կուտար որ Հռոմէյն եկեղեցին ինքիմէ վերցընէ իւր մէջէն քանի մը անկարգութիւններ, որոց մէջ կըրողքէին ոմանք: Այս բանս իտալացի եպիսկոպոսաց մտքին յարմար չ'գալով, մեջերսն մէկը արեամբար հակառակ կերպով մը դարձաւ ըսաւ լատիներէն. Gallus cantat (Գաղղիացին կամ արքայադը կերգէ) (*): Գաղղիացի եպիսկոպոսը իսկոյն կ'ապատասխանէ անշիտը կերպով. Utinam ad Galli cantum Petrus resipisceret (Երանի թէ արքայադը կերգէ Պետրոս զղջումի գար): Ահա այս անգամ իսկ ալ այնպէս եղաւ:»

Պ. Տիւփեն յետոյ կնկարագրէ Աստորիացեաց Ռոմանիայի մէջ ըրած խօսութիւնները, կցուցընէ թէ նոցա բռնաւոր կառավարութեան կերպը առելի հաճոյ է կարդինալներուն՝ քան թէ Գաղղիացեաց ազատական կառավարութիւնը: Կը պատմէ Աստորիոյ ատելի եղածը, Խալկացեաց միաձայն քուէարկութեամբ զուրս ձգուիլն ու մերժուիլը, պապերուն Պոլոնիայի նահանգին վրայ տիրապետելու բացարձակ իրաւունքը ոչ երբեք ունեցածը, կարդինալ Անրոնէլլին իւր խոստ պատասխանով Նախորդէն կայսեր խորհուրդն արձամարնելը, եւ յետոյ կրէ. «Պապերը իրենց արուրը նստած, ատեններն երդում կ'ընեն եղեր որ եկեղեցւոյ տերութեան կալուածներէն բան չ'բախտեցընեն: Զարմանալի պատճառովն է Գիտէք ինչպէս կ'առավարուին եկեղեցւոյ կալուածները այն երդումէն առաջ: Հռոմէյն մէջ այս մեծ անկարգութիւնը կար որ պապերը գաւակ չ'ունենալով՝ տերութեան կալուածները իրենց եղբորորդեաց կրածներէն, առատապէս: Իննովկենտիոս ԺԳ՝ պապը 1692-ին մասնաւոր կողմով մը հանեց այս անկարգութեան դէմ, եւ իւր յաջորդներուն վրայ պարտք դրաւ որ այն երդումն ընեն: Այժմ, երբոր քաղաքական դիպուածները եւ ժողովրդոց իրաւունքները կ'աշնանեն որ պապին տերութեան մէկ մասը առնուի ձեռքէն, իրեն ըրած երդումը ինչ բանի կուգայ: Ո՞ր բազաւորը արտուր նստած ատենը երդում ըրած ունի որ ուրիշները ամենալին չ'յաղքեն իրեն, եւ իր երկրէն մէկ մաս մըն ալ չ'առնուն ձեռքէն: Թէ որ այնպիսի երդումը բանի գար, ոչ ապաքէն ամեն բազաւոր ալ կրնէր. վասնզի բազաւոր մը չ'կայ որ յանձն տանու: Կամաւորապէս իր տերութեան պզտիկնալը: Ապա ուրեմն կարդինալ Անրոնէլլին անշաղար «Ո՞ր կարենք» ըսած հռչակաւոր խօսքը պէտք է հասկերնալ, «Ո՞ր կամիմք»:

Հանձարեղ ատենախօսը կվերջացընէ իւր ճառը՝ ըսելով թէ «Գաղղիոյ տերութիւնը պէտք չէ որ խառնուի Խալկոյ զօրծերուն՝ երբոր Խալկացիք միաձայն քուէարկութեամբ հասարակաց եւ իրաւացի ու օրինաւոր կերպով կուգեն որոշել իրենց վիճակը. եւ պէտք չէ մտիկ ընէ այն պապականաց բողոքներուն որ կ'աշնանեն թէ պապին ժամանակաւոր իշխանութիւնը հաստատ պահելու համար՝ Գաղղիան երբայ զօրքով՝ Խալկացիները պապին ծանր լուծին տակը նուաճէ»:

Պ. Տիւփենին եւ իրեն մտքովը խօսողներուն իրաւունք տուաւ ձերակուտին մեծ մասը, եւ ըստ այնմ 114 քուէով 16 քուէի դէմ որոշուեցաւ որ Գաղղիոյ տերութիւնը չ'առնուի Խալկացեաց ազգային կամացը, այլ բողոս որ պապին ձեռքէն Ռոմանիա նահանգը ելլէ:

(*) Լատիներէն Gallus (կաղուս) բառը թէ արքայադը կը նշանակէ եւ թէ գաղղիացի: